



Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒԹՂ

*ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇԸ*

*Հեղինակ՝*

Վարդան Արամյան, Վահրամ Ջանվելյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

ԵՐԵՎԱՆ  
2002

## ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ (Fiscal impulse)

Վարդան Արամյան, Վահրամ Ջանվելյան

### *Ներածություն*

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը, որը ծախսերի կատարման կամ եկամուտների հավաքագրման միջոցով ազդում է ամբողջական պահանջարկի վրա, 1994 թվականից սկսած բազմիցս փոփոխությունների է ենթարկվել: Սկզբնական շրջանում բյուջեի զգալի պակասուրդի առկայության և դրա ֆինանսավորման աղբյուրների սահմանափակվածության պայմաններում կառավարությունը խնդիր ուներ կրճատել պակասուրդը, ինչը, բնականաբար, իր ազդեցությունը թողեց մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման վրա: Սակայն պակասուրդի նվազումը միանշանակ չի ազդում, կառավարության քաղաքականության ուղղվածության և ամբողջական պահանջարկի վրա: Այսպես, ենթադրենք, թե ուսումնասիրվող տարվա արդյունքում ձեռք է բերվել եկամուտների և ծախսերի այնպիսի մակարդակ, որի պայմաններում գրանցվել է բյուջեի զգալի պակասուրդ: Առաջին հայացքից թվում է, թե հարկաբյուջետային քաղաքականությունն ընդլայնող է (երբ տնտեսությունից ավելի քիչ փող է հավաքագրվում, քան ներարկվում խթանելով ամբողջական պահանջարկը): Սակայն պատկերը կարող է այլ լինել, եթե դիտարկենք եկամուտների փոփոխությունը՝ փաստացի ՀՆԱ-ի և ծախսերի փոփոխությունը՝ պոտենցիալ ՀՆԱ-ի փոփոխությունների նկատմամբ (այդ մասին ավելի մանրամասն՝ հետագայում): Մեր օրինակում, եթե եկամուտների աճի և փաստացի ՀՆԱ-ի աճի հարաբերությունը հավասար լինի համեմատվող ժամանակաշրջանի բյուջեի եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերության մեծությանը, նշանակում է հավաքագրվել է ՀՆԱ-ի աճին համապատասխան եկամուտ: Միևնույն ժամանակ, եթե կատարված ծախսերի արդյունքում փաստացի ՀՆԱ-ն ավելի ցածր լինի, քան պոտենցիալը, կնշանակի, որ պոտենցիալ ՀՆԱ-ի անհրաժեշտ մակարդակի ձեռքբերման համար համապատասխան ծախսեր չեն կատարվել, թեկուզև տվյալ տարում ձևավորվել է պակասուրդ: Համանման կարգով հնարավոր է նաև ուսումնասիրվող տարում ունենալ ավելցուկ, ընդ որում, եկամուտների մասում զգալի կշիռ ունենան դրամաշնորհներն ու ԿԲ շահույթը, որոնք տնտեսությունից չեն հավաքագրվում, իսկ տնտեսությունից փաստացի հավաքագրված եկամուտները քիչ լինեն (եկամուտները փաստացի ՀՆԱ-ի աճին համապատասխան չեն հավաքագրվել): Արդյունքում, եթե դատենք միայն բյուջեի ավելցուկով, ապա կստացվի, որ հարկաբյուջետային քաղաքականությունը զսպողական ազդեցություն է ունեցել տնտեսության վրա, թեև իրականում ծախսերի անհրաժեշտ մակարդակի ապահովման պայմաններում, անհրաժեշտ եկամուտների մակարդակ չի հավաքագրվել տնտեսությունից, որի արդյունքում խթանվել է ամբողջական պահանջարկը (հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է ընդլայնող): Սա է պատճառը, որ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ է օգտվել հարկաբյուջետային ազդակների ցուցանիշներից: Հակառակ դեպքում, եթե առաջնորդվենք միայն պակասուրդի ցուցանիշներով, այն կարող է խեղաթյուրել փաստացի ձևավորված իրավիճակը:

Նյութում ներկայացված է կառավարության եռամսյակային հարկաբյուջետային դիրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ նշելով, թե այդ դիրքը հիմնականում բյուջեի ծախսային, թե եկամտային մասի փոփոխման արդյունք է: ՀՀ պետբյուջեի ծրագրերի կատարման դեպքում փորձ է արվել համեմատել ակնկալվող և փաստացի ցուցանիշների պարագայում ձևավորված արդյունքների ազդեցությունը (զսպողական թե ընդլայնող) տնտեսության վրա:

*Հարկաբյուջետային ազդակների հաշվարկման մեթոդիկան*

Դիտարկենք հարկաբյուջետային ազդակների հաշվարկման երկու մեթոդ՝ **բազիսային և դանիական**: Բազիսային մեթոդով հարկաբյուջետային ազդակների հաշվարկման համար նախ անհրաժեշտ է հաշվարկել ցիկլային չեզոք բյուջեն՝

$$CNB_t = t_0 Y_t - g_0 P Y_t$$

որտեղ՝

CNB<sub>t</sub> - ցիկլային չեզոք բյուջե,

Y<sub>t</sub> - փաստացի ՀՆԱ t ժամանակահատվածում,

PY<sub>t</sub> - պոտենցյալ ՀՆԱ t ժամանակահատվածում,

t<sub>0</sub> - եկամուտների հարաբերությունը ՀՆԱ-ին բազիսային ժամանակահատվածում,

g<sub>0</sub> - ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ին բազիսային ժամանակահատվածում:

Համեմատության համար որպես բազիսային ընտրված այն տարին է, երբ բյուջեի և փաստացի ՀՆԱ-ի ցուցանիշները շատ մոտ են ցանկալի (պոտենցիալ) մակարդակին: Ցիկլային չեզոք բյուջեն բյուջեի այն հաշվեկշիռն է, որը ներառում է ՀՆԱ-ի ցիկլային տատանումները և չի կրում կառավարության դիսկրետ քաղաքականության ազդեցությունը: Կառավարության դիսկրետ քաղաքականությունը ենթադրում է հարկային վարչարարության ուժեղացում, օրենսդրության փոփոխություն, որոնք վերաբերում են պետական գնումներին, հարկային համակարգին և տրանսֆերտային վճարումներին՝ նպատակ ունենալով ազդել ամբողջական պահանջարկի վրա: Ցիկլային չեզոք բյուջեի հաշվարկումից հետո կարող ենք որոշել բյուջեի դիրքը (պետության հարկաբյուջետային դիրքը) տվյալ տարում՝ ընթացիկ տարվա ընդհանուր պակասուրդից հանելով ցիկլային չեզոք բյուջեն՝

$$FIS_t = T_t - G_t - CNB_t$$

որտեղ՝

T<sub>t</sub> - բյուջեի եկամուտները t ժամանակահատվածում,

G<sub>t</sub> - բյուջեի ծախսերը t ժամանակահատվածում,

FIS<sub>t</sub> - բյուջետային դիրքը t ժամանակահատվածում:

Ընթացիկ տարվա ընդհանուր պակասուրդը ներառում է և՛ տնտեսության ցիկլային տատանումները, և՛ կառավարության դիսկրետ քաղաքականության արդյունքները: Հետևաբար, հարկաբյուջետային դիրքը բնութագրում է պետության դիսկրետ քաղաքականության արդյունքները:

Հարկաբյուջետային ազդակի ցուցանիշն իրենից ներկայացնում է բյուջեի դիրքերի տարբերությունը՝

$$FI_t = FIS_t - FIS_{t-1} \quad \text{կամ}$$

$$FI_t = FI_t^T + FI_t^G = (t_0 - \Delta T_t / \Delta Y_t) \Delta Y_t + (\Delta G_t / \Delta P Y_t - g_0) \Delta P Y_t$$

որտեղ՝

FI - հարկաբյուջետային ազդակ,

FI<sub>t</sub><sup>T</sup> - եկամուտների ազդակ,

FI<sub>t</sub><sup>G</sup> - ծախսերի ազդակ:

**Եկամուտների ազդակ**  $[(t_0 - \Delta T_t / \Delta Y_t) \Delta Y_t]$ , բնութագրում է կառավարության եկամտային քաղաքականությունը և եկամուտների փոփոխության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա: Այն համարվում է չեզոք, եթե պետական եկամուտների և փաստացի (անվանական) ՀՆԱ-ի աճի հարաբերությունը հավասար է բազիսային տարվա եկամտի և ՀՆԱ հարաբերությանը, այսինքն՝ այս պայմաններում պետությունը հավաքագրում է այնքան եկամուտ, որքան հնարավոր է հավաքագրել փաստացի ՀՆԱ-ի տվյալ աճի պայմաններում: Եթե եկամուտների և փաստացի ՀՆԱ-ի աճի հարաբերությունը գերազանցում է բազիսային տարվա

եկամուտների և ՅՆԱ-ի հարաբերությանը (եկամուտների ազդակը բացասական է), ապա ազդեցությունը զսպողական է, հակառակ դեպքում՝ ընդլայնող:

**Ծախսերի ազդակ** [ $\Delta G_t / \Delta P Y_t - g_0 \Delta P Y_t$ ]. Ի տարբերություն եկամուտների ազդակի՝ ծախսերի ազդակի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՅՆԱ-ի պոտենցիալ մակարդակը: Այն բնութագրում է կառավարության ծախսային քաղաքականությունը և դրա ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա: Ծախսերի ազդակը համարվում է չեզոք, երբ ծախսերն աճում են պոտենցիալ ՅՆԱ-ի աճին համապատասխան, այսինքն՝ դա ծախսերի այն անհրաժեշտ մակարդակն է, որի պայմաններում ամբողջական պահանջարկը խթանվում է այնքանով, որքան անհրաժեշտ է պոտենցիալ ՅՆԱ-ի ցանկալի աճի մակարդակ ձեռք բերելու համար: Եթե ծախսերի աճը գերազանցում է պոտենցիալ ՅՆԱ-ի աճն այնքանով, որ ծախսերի և պոտենցիալ ՅՆԱ-ի աճերի հարաբերակցությունը գերազանցում է բազիսային ժամանակաշրջանի ծախս/ՅՆԱ ցուցանիշը (ծախսերի ազդակը դրական է), ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա ընդլայնող է (խթանվում է ամբողջական պահանջարկը), և հակառակը՝ եթե ծախսերի և պոտենցիալ ՅՆԱ-ի աճերի հարաբերությունն ավելի փոքր է, քան բազիսային ժամանակահատվածի ծախս/ՅՆԱ ցուցանիշը, ապա նախատեսվածից քիչ է խթանվել ամբողջական պահանջարկը, և քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա զսպող է:

**Հարկաբյուջետային ազդակ:** Հարկաբյուջետային ազդակը վերը նշված երկու ազդակների հանրագումարն է և բնութագրում է կառավարության հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա: Հարկաբյուջետային ազդակը չեզոք է, երբ այն զրո է կամ ձգտում է զրոյի, այսինքն՝ պետությունը տնտեսությունից հավաքագրում է այնքան եկամուտ, որքան հնարավոր է փաստացի ՅՆԱ-ի տվյալ աճի պայմաններում և միաժամանակ կատարում այնքան ծախս, որքան անհրաժեշտ է պոտենցիալ ՅՆԱ-ի աճի տվյալ մակարդակի ապահովման համար. արդյունքում ամբողջական պահանջարկ չի խթանում: Եթե հարկաբյուջետային ազդակը դրական է, ապա պետությունն իր ծախսային և (կամ) եկամտային քաղաքականություններով խթանում է ամբողջական պահանջարկը և հակառակը:

Հարկաբյուջետային ազդակի բազիսային մեթոդով հաշվարկների ժամանակ որպես բազիսային ժամանակաշրջան ընտրվել է 1996 թ. չորրորդ եռամսյակը: Դա պայմանավորված է նրանով, որ այս եռամսյակում ձևավորված փաստացի ՅՆԱ-ն մոտ է եղել իր պոտենցիալ մակարդակին, իսկ եկամուտներ/ՅՆԱ և ծախսեր/ՅՆԱ ցուցանիշներն օգտագործվել են ցիկլային չեզոք բյուջեն սահմանելու համար, այսինքն՝ յուրաքանչյուր ժամանակահատվածում բյուջետային դիրքը համեմատվել է այս ժամանակահատվածի բյուջետային դիրքի հետ: Անհրաժեշտ է նշել, որ է ժամանակահատվածում ֆիսկալ քաղաքականությունը կարող է լինել ընդլայնողական՝ համեմատած բազիսային ժամանակահատվածի հետ, եթե նույնիսկ կատարվել են ֆիսկալ խիստ կարգավորումներ, այսինքն՝ պակասուրդի կտրուկ կրճատում՝ համեմատած բազիսային ժամանակաշրջանի հետ:

Ֆիսկալ ազդակների հաշվարկման երկրորդ մեթոդը, ինչպես արդեն նշվեց, **դանիական մեթոդն** է, ըստ որի ազդակի հաշվարկներում որպես բազիսային ընդունվում է նախորդ տարին: Այս մեթոդի առավելությունն այն է, որ վերանում է օպտիմալ բազայի ընտրության վիճելի հարցը:

$$FI = (\Delta G - nG_{-1}) - [\Delta T - (\Delta Y/Y_{-1})T_{-1}]$$

որտեղ  $n = \Delta PY/PY_{-1}$  -ը պոտենցիալ ՅՆԱ-ի աճն է: Բանաձևը հարաբերելով նախորդ տարվա ՅՆԱ-ին և վերադասավորելով՝ ստանում ենք.

$$FI/Y_{-1} = (\Delta G/G_{-1} - n)g^* - (\Delta T/T_{-1} - \Delta Y/Y_{-1})t^*$$

$$\text{որտեղ } g^* = G_{-1}/Y_{-1}, t^* = T_{-1}/Y_{-1}$$

Ինչպես երևում է, վերջին երկու բանաձևերը նույնն են, ինչ բազիսային մեթոդով հաշվարկված ազդակների դեպքում, բացառությամբ բազիսային  $g_0$  և  $t_0$  ցուցանիշների, որոնց

փոխարեն օգտագործված են նախորդ տարվա 9\* և 1\* ցուցանիշները: Փաստորեն, այս երկու բանաձևերը մեկնաբանում են բյուջեի հաշվեկշռի փաստացի փոփոխությունը նորմատիվային չեզոք<sup>1</sup> հաշվեկշռի փոփոխության նկատմամբ:

Տեսության մեջ ֆիսկալ ազդակները տարանջատվում են ակտիվային (ծախսային) և պասիվային (եկամտային) բաղադրիչների, որը բացատրվում է նրանով, որ ցանկացած երկիր ամբողջական պահանջարկի վրա ավելի շուտ ազդում է ծախսային մասով, քան եկամտային, այսինքն, այս գործընթացում ծախսերն ավելի ակտիվ են:

Անրադառնանք նաև հետևյալ հարցերին՝

- ինչու եկամուտների ազդակում օգտագործվում է փաստացի ՀՆԱ-ն, այլ ոչ պոտենցիալը և հակառակը,
- ինչու ծախսերի ազդակում օգտագործվում է ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակը, այլ ոչ փաստացին:

Սկսենք հարցի մեկնաբանումը ծախսերի ազդակի քննարկումից: Խնդիրն այն է, որ այստեղ դիտարկվում է ծախսերի այն անհրաժեշտ մակարդակը, որի պայմաններում կխթանենք ամբողջական պահանջարկն այնքանով, որքան անհրաժեշտ է պոտենցիալ ՀՆԱ-ի ցանկալի մակարդակ ձեռք բերելու համար, այսինքն՝ կատարված ծախսերի արդյունքում ստացված փաստացի ՀՆԱ-ն պետք է մոտ գտնվի իր պոտենցիալ մակարդակին:

Եկամուտների ազդակում կիրառված փաստացի ՀՆԱ-ի կիրառման պատճառը հիմնականում բացատրվում է նրանով, որ հարկերը, որոնց բաժին է ընկնում բյուջեի եկամուտների զգալի մասը, հավաքագրվում են փաստացի ձևավորված ՀՆԱ-ից: Այդ իսկ պատճառով եկամուտների աճը դիտարկվում է փաստացի ՀՆԱ-ի համեմատությամբ:

### *Հարկաբյուջետային ազդակների գնահատականների կիրառումը ՀՀ-ում*

Հարկաբյուջետային երեք ազդակները (եկամտի, ծախսերի և հարկաբյուջետային) հաշվարկվել են օգտագործելով ՀՀ ԿԲ 1999 թ. ֆինանսական ծրագրում օգտագործված 1996-99 թթ. ՀՀ կառավարության, ՀՀ կենտրոնական բանկի և ԱՄՅ-ի համատեղ տնտեսական ծրագրերի աղյուսակների համախմբված բյուջեի<sup>2</sup> եռամսյակային տվյալները, ընդ որում, 1999 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների համար կիրառվել են ՀՀ ԿԲ կողմից գնահատված ցուցանիշներ (առանց եզրափակիչ շրջանառության): Վերլուծությունների արդյունքում ի հայտ են եկել վիճակագրական որոշ բացթողումներ և թերություններ՝

- ՀՀ-ում 1998 թ. կոնսուլիդացված բյուջեի եռամսյակային տվյալների հստակ վիճակագրություն գոյություն չունի, այդ իսկ պատճառով օգտագործվել են համախմբված բյուջեի 24.04.99 թ. հուշագրով ճշգրտված և նախնական ցուցանիշները:
- Որպեսզի վերլուծություններն ավելի ճշգրիտ լինեն, անհրաժեշտ է բյուջեի ծախսերից և եկամուտներից հանել այն հոդվածները, որոնց ներհուսքը և արտահուսքը կապված չեն ներքին տնտեսության հետ: Հետևաբար բյուջեի եկամուտներից պետք է հանել արտաքին դրամաշնորհները և ԿԲ շահույթը, իսկ ծախսերից՝ արտաքին տոկոսավճարները և ներքին տոկոսավճարների այն մասը, որը կապված է ԿԲ կողմից տրամադրված վարկի սպասարկման հետ: Անհրաժեշտ է կապիտալ ծախսերից հանել արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող կապիտալ ծախսերի այն մասը, որը ստացվում է որպես մեքենասարքավորում և տնտեսություն է մտնում ոչ փողային տեսքով: Սակայն ծախսերի նման մանրակրկիտ տարանջատման վիճակագրության բացակայության հետևանքով ենթադրել ենք, որ մինչև 1998 թ. արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող կապիտալ ծախսերի մոտ 70 %-ը բաժին կընկնի մեքենասարքավորումներին: 1999 թ. համար այդ ցուցանիշը վերցվել է 45 %: Հետևաբար, մեր վերլուծություններում օգտագործվել են

<sup>1</sup> Որպես նորմատիվային չեզոք բյուջե վերցված է այն ժամանակահատվածի բյուջեն, որի նկատմամբ կատարվում է համեմատությունը, ընդ որում, այդ ժամանակահատվածում բյուջեն ընդունված է ցիկլային չեզոք, իսկ եկամուտների և ծախսերի աճերի մակարդակները՝ նորմատիվային մակարդակ:

<sup>2</sup> Համախմբված բյուջեն ներառում է պետական և համայնքային բյուջեները, ինչպես նաև սոցիալական ապահովագրության պետական հիմնարարի միջոցները:

բյուջեի եկամուտներն առանց դրամաշնորհների և ԿԲ շահույթի, իսկ ընդհանուր ծախսերը՝ առանց արտաքին տոկոսավճարների, ԿԲ կողմից տրամադրված վարկի դիմաց վճարված տոկոսների և արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող կապիտալ ծախսերի վերոնշյալ մասի:


- Անհրաժեշտ է նաև ճշգրտել պոտենցիալ ՀՆԱ-ն՝ հաշվարկման առումով: Պոտենցիալ ՀՆԱ-ն հաշվարկել ենք՝ օգտվելով Հողրիք Պրեսկոֆի ֆիլտրից<sup>3</sup>:

Ստորև բերված են երկու մեթոդով կատարված հաշվարկների արդյունքները, ինչպես նաև ուսումնասիրվող տարիներում ազդակների միտումների գրաֆիկական մեկնաբանությունը:


<b>Հարկաբյուջետային ազդակների դանդաղացումներ</b>					<b>Հարկաբյուջետային ազդակների բազիսային մեթոդ</b>		
Տարի	Եռամսյակ	Եկամուտների ազդակը ՀՆԱ-ում (%)	Ծախսերի ազդակը ՀՆԱ-ում (%)	հարկաբյուջետային ազդակը ՀՆԱ-ում (%)	Եկամուտների ազդակը ՀՆԱ-ում (%)	Ծախսերի ազդակը ՀՆԱ-ում (%)	հարկաբյուջետային ազդակը ՀՆԱ-ում (%)
1997	1	0.94	-0.17	0.77	2.58	-2.76	-0.18
	2	-3.20	-0.21	-3.41	-2.19	-1.59	-3.77
	3	-5.86	2.75	-3.11	-4.37	1.89	-2.48
	4	-5.21	-1.28	-6.50	-5.35	-1.13	-6.48
<b>տարեկան</b>		<b>-3.56</b>	<b>0.22</b>	<b>-3.33</b>	<b>-2.56</b>	<b>-0.81</b>	<b>-3.37</b>
1998	1	-6.48	1.15	-5.33	-4.68	-1.46	-6.15
	2	-1.90	1.31	-0.59	-1.27	-0.42	-1.69
	3	-1.40	-1.48	-2.88	-1.05	-1.98	-3.03
	4	4.10	3.82	7.92	3.39	3.67	7.06
<b>տարեկան</b>		<b>-1.09</b>	<b>1.06</b>	<b>-0.03</b>	<b>-0.77</b>	<b>0.00</b>	<b>-0.77</b>
1999	1	0.94	0.26	1.20	1.28	-1.95	-0.66
	2	-0.07	1.16	1.10	0.04	0.05	0.08
	3	-4.07	6.22	2.16	-4.08	5.33	1.25
	4	-2.07	-3.31	-5.38	-2.06	-3.17	-5.24
<b>տարեկան</b>		<b>-1.26</b>	<b>1.08</b>	<b>-0.18</b>	<b>-1.23</b>	<b>0.09</b>	<b>-1.14</b>

*Հարկաբյուջետային ազդակների գրաֆիկական մեկնաբանությունը*

<sup>3</sup> Պոտենցիալ ՀՆԱ հաշվարկելու համար վերցվել են անվանական ՀՆԱ-ի հարթեցված շարքերը և հաշվարկվել Հողրիք Պրեսկոֆի ֆիլտրով:



Ինչպես երևում է գրաֆիկներից՝ եկամուտների, ծախսերի և հարկաբյուջետային ազդակները երկու մեթոդների դեպքում էլ ցուցաբերել են միևնույն միտումները, թեև բացարձակ արժեքներում նկատվել են փոքր-ինչ շեղումներ: Հետևաբար, ազդակների հաշվարկման դեպքում բազայի ընտրությունն էականորեն չի ազդում դրանց հարաբերական ցուցանիշների վրա: Այդ պատճառով հարկաբյուջետային հատվածի վերաբերյալ մեկնաբանություններ կատարելիս՝ կհիմնվենք դանիական մեթոդով հաշվարկված ցուցանիշների վրա, քանի որ բազայի ճշգրիտ ընտրություն կատարելը որոշ առումով դժվար է, և դանիական մեթոդը լավագույնը կլինի մեր տնտեսությունը բնութագրելու համար:



**Եկամուտների քաղաքականություն**

Ուսումնասիրվող ժամանակահատվածում եկամուտների ազդակները եղել են բավականին անկայուն, ինչը մասամբ բացատրվում է հարկային օրենսդրության փոփոխություններով: Վերջինս նպատակաուղղված էր նաև տարվա ընթացքում բյուջեի կանխիկ հոսքերի հարթեցմանը (1997 թվականից կարևորվեց հաստատագրված վճարների դերը. հուլիսի 1-ից նախկին «ըստ ծագման վայրի» մեխանիզմի փոխարեն ներդրվեց «սահմանի վրա», ինչպես և ըստ նշանակման կամ սպառման վայրի ԱԱՀ-ի և ակցիզահարկի գանձման մեխանիզմը: 1998 թ. բարձրացվեց հարկային զործակալների դերը, ներդրվեց շահութահարկի ամսական կանխավճարների տարբերակը, 1998 թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտավ «Գույքահարկի մասին» նոր օրենքը և այլն):

1997 թ. առաջին եռամսյակում գրանցվել է եկամուտների դրական, իսկ մնացած եռամսյակներում՝ բացասական ազդակներ: Եկամտային քաղաքականությունը 1997 թ. ընդհանուր առմամբ եղել է զսպողական: Առաջին եռամսյակի եկամտի դրական ազդակն արդյունք է ոչ հարկային եկամուտների 4.55 %-ով նվազման<sup>4</sup>, որի հետևանքով բյուջեի եկամուտներն աճել են ընդամենը 0.32 %-ով, մինչդեռ փաստացի ՀՆԱ աճը գրանցվել է 10 %, ինչն ակնհայտորեն նախանշում է, որ եկամուտների անհրաժեշտ մակարդակը նշված ժամանակահատվածում չի հավաքագրվել: Մնացած երեք եռամսյակներում նկատվել է բյուջեի եկամուտների աճ համապատասխանաբար 6.51 %՝ երկրորդ, 6.8 %՝ երրորդ և 6.49 %՝ չորրորդ եռամսյակներում: Երրորդ եռամսյակի համեմատաբար բարձր աճը բացատրվում է 1997 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ավելացված և ակցիզային հարկերի՝ ըստ նշանակման վայրի սկզբունքի գանձումով, որի արդյունքում տարվա կտրվածքով այս հարկատեսակների ամենաբարձր աճ գրանցվեց երրորդ և չորրորդ եռամսյակներում (ԱԱՀ գծով երրորդ եռամսյակում գրանցվել է 2.63 %, իսկ չորրորդում՝ 2.47 % աճ):

1998 թ. եկամտային քաղաքականությունն աչքի է ընկել խիստ տատանողականությամբ. առաջին երեք եռամսյակներում գրանցվել են եկամտի բացասական ազդակներ, ընդ որում, շեղումը մեծ է առաջին եռամսյակում, իսկ չորրորդ եռամսյակում՝ դրական ազդակ: Առաջին եռամսյակում (թեև այս եռամսյակը սովորաբար տնտեսական գործունեության ոչ ակտիվ շրջան է) նկատվել է պետբյուջեի եկամուտների 8.52% աճ՝ անվանական ՀՆԱ 21 % աճի պայմաններում նախորդ տարվա համեմատ, որից 7.11 %-ը բաժին է ընկնում հարկային եկամուտներին, իսկ 1.41 %-ը՝ ոչ հարկային եկամուտներին: 1997 թվականի հարկային քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները շարունակաբար գործեցին նաև 1998 թ. ընթացքում, իսկ հարկերի հավաքագրմանն ուղղված հետևողական վարչարարական միջոցառումների կիրառումը նպաստեց հարկման բազայի մեծացմանը, ինչը մասնավորապես ակնհայտ է ԱԱՀ-ի գծով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3.84 %-ով: 1998 թ. հաջորդ երկու եռամսյակներում գրանցվել է բյուջեի եկամուտների համեմատաբար ցածր աճ՝ համապատասխանաբար 4.64% և 4.29 %, որոնց արդյունքում տվյալ եռամսյակների բացասական ազդակների բացարձակ արժեքներն ավելի ցածր են, քան առաջին եռամսյակում: Ինչ վերաբերում է չորրորդ եռամսյակին, ապա այս ժամանակահատվածում բյուջեի եկամուտների -1.1 %-ով նվազումը պայմանավորված էր հիմնականում նախորդ տարվա համեմատ ներմուծման ծավալների նվազմամբ (մասնավորապես նվազել են ԱԱՀ-ն 0.9 %-ով և ակցիզահարկը՝ 0.57 %-ով, որոնց հարկման բազան բավականին մեծացել էր սահմանի վրա հարկման մեխանիզմի կիրառմամբ): Բացի այդ, որոշակի ազդեցություն ունեցավ նաև այս եռամսյակում ստացված Կառուցվածքային բարեփոխումների վարկը, որը հնարավորություն ստեղծեց ծախսերի որոշ մասն արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորելու:

1999 թ. ևս զերծ չմնաց եկամտային քաղաքականության տատանումներից, ինչն արդյունք էր մասնավորապես ծախսերի ֆինանսավորման արտաքին աղբյուրների ուշացման և դրա հետևանքով բյուջեի եռամսյակային ծրագրերի ճշգրտման: Արդյունքում, առաջին և երկրորդ եռամսյակների ֆինանսավորման հիմնական բեռն ընկավ ներքին աղբյուրներից ստացվող բյուջեի եկամուտների վրա: Առաջին եռամսյակում բյուջեի եկամուտների ծրագրավորված 44 մլրդ դրամի դիմաց ապահովվել է 42 մլրդ դրամի մուտք, սակայն եկամուտների ազդակը գրանցել է դրական ցուցանիշ, ինչը հիմնականում արդյունք է նախորդ տարվա այս ժամանակահատվածում հավաքագրված խոշոր դրամական մուտքերի (նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամուտներն աճել են ընդամենը 0.52 %-ով): Երկրորդ եռամսյակում ևս բյուջեի եկամուտների 1.7 %-ով աճը մեծ չէ նախորդ տարվա նկատմամբ: Հետաքրքրական է երրորդ եռամսյակի եկամտային քաղաքականության վարքագիծը. չնայած այս եռամսյակում հավաքագրված եկամուտների բարձր մակարդակին (հարկային եկամուտները կազմել են ծրագրի 102 %-ը), որի արդյունքում ունեցել ենք եկամուտների դրական ազդակ, եռամսյակն աչքի է ընկել հարկային մուտքերի խիստ անհամաչափությամբ (եռամսյա եկամուտների 28.2 %-ը հավաքագրվել է վերջին շաբաթում): Նշենք, որ չորրորդ եռամսյակին բաժին է ընկել

<sup>4</sup> Նյութում օգտագործված ցուցանիշների տոկոսային փոփոխությունները տվյալ ցուցանիշի փոփոխություններն են ՀՆԱ նկատմամբ տոկոսներով:

տարվա եկամուտների հավաքագրման 28.8 %-ը, որի ապահովման պարագայում գրնցվել է բացասական ազդակ:

### *Ծախսային քաղաքականություն*

Ծախսային քաղաքականությունը՝ կապված բյուջեի եկամուտների անկանոն հոսքերի, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների սահմանափակվածության հետ, ևս եղել է անկայուն:

1997 թ. առաջին եռամսյակում ծախսային քաղաքականությունը եղել է չեզոք, երկրորդ և չորրորդ եռամսյակներում՝ զսպողական և երրորդում՝ ընդլայնող: Առաջին եռամսյակում ծախսերը, համեմատած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ, աճել են 3.13 %-ով: Բավականին աճել է նաև պոտենցիալ ՀՆԱ-ն (6.19 %-ով): Երկրորդ եռամսյակում ծախսային քաղաքականությունը զսպողական է եղել, ինչը մասնավորապես բացատրվում է նրանով, որ ծախսերն աճել են ընդամենը 2.79 %-ով, իսկ եռամսյակային փաստացի կատարված ծախսերը կազմել են եռամսյակային ծրագրի 86.7 %-ը: Առաջին կիսամյակի ծախսային քաղաքականության նման վարքագիծն արդյունք էր եկամուտների հավաքագրման ոչ բավարար մակարդակի և արտաքին ֆինանսավորման ուշացման: Երրորդ և չորրորդ եռամսյակներում ծախսերն աճել են համապատասխանաբար 5.96 %-ով և 2.9 %-ով: Երրորդ եռամսյակում կառավարությունը գերակատարել է իր եռամսյակային ծրագիրը 103 %-ով (ծրագրով նախատեսված 52.861 մլրդ դրամի դիմաց գրանցվել է փաստացի 54.438 մլրդ դրամի ծախս), ինչի արդյունքում էլ գրանցվել է դրական ազդակ: Նշենք նաև, որ երրորդ եռամսյակին բաժին ընկավ Կառուցվածքային բարեփոխումների վարկի (SAC) ստացումը, ինչը ընդլայնեց կառավարության հնարավորությունները ֆինանսավորելու ծախսերը:

1998 թ. առաջին երկու եռամսյակներում ծախսային քաղաքականությունն ընդլայնող էր: Բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար՝ առաջին եռամսյակում 4.15 %-ով և երկրորդ եռամսյակում՝ 5.48 %-ով: Այս կիսամյակում ծախսերի ֆինանսավորման արտաքին աղբյուրների սահմանափակության հետևանքով ծախսերը ֆինանսավորվել են հիմնականում ներքին աղբյուրների հաշվին, մասնավորապես հարկային մուտքերի բարձր մակարդակի ապահովման շնորհիվ (դա է վկայում նաև այս կիսամյակում եկամուտների բացասական ազդակը): Նշենք, որ ԿԲ կողմից փոխանցած 7.9 մլրդ դրամ շահույթը որոշակիորեն ընդլայնեց ծախսերի ֆինանսավորման կառավարության հնարավորությունը: Ի տարբերություն առաջին եռամսյակի՝ երկրորդ եռամսյակում բյուջեն ունեցել է -9.7 մլրդ դրամ պակասուրդ (առաջին եռամսյակում ունեցել ենք 3.2 մլրդ դրամ ավելցուկ ի հաշիվ ԿԲ կողմից մարտի 31-ին փոխանցած 5.4 մլրդ դրամ շահույթի), որն ամբողջապես ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, և որի հետևանքով այս եռամսյակում ծախսերի աճը, հետևաբար և ազդակի ցուցանիշը ավելի մեծ է եղել, քան առաջին եռամսյակում, թեև եկամուտների բացասական ազդակներն առաջինում ավելի մեծ են, քան երկրորդում: Երրորդ եռամսյակում ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են ընդամենը 2.04 %-ով, ինչը ևս հիմնականում ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին: Ընդհանուր առմամբ, պետբյուջեի ծախսողական քաղաքականությունն առաջին ինն ամիսների ընթացքում, միջոցների սահմանափակվածության պայմաններում, ընթացել է տարեկան ծրագրի համեմատ փաստացի ընթացիկ ծախսերի 62.3 % և կապիտալ ծախսերի 45.9 % ֆինանսավորման ուղղությամբ, որի արդյունքում ծախսերի տարեկան մակարդակի կատարման լարվածությունը տեղափոխվեց չորրորդ եռամսյակ: Արտաքին աղբյուրների հաշվին ծախսերի հիմնական մասն իրականացվեց չորրորդ եռամսյակում (տարեկան կատարված ծախսերի 37 %-ը կատարվեց այս եռամսյակում), որի արդյունքում չորրորդ եռամսյակում գրանցվել է ծախսերի համեմատաբար բարձր դրական ազդակ:

1999 թ. ՀՀ ծախսային քաղաքականությունն աչքի է ընկել խիստ տատանողականությամբ, ինչը բացատրվում է տարվա առաջին կիսամյակում ծախսերի թերակատարմամբ և դրա հետևանքով տարվա մնացած եռամսյակների ծրագրային ցուցանիշների ճշգրտումներով (1999 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների թվային տվյալներում օգտագործված են գնահատված ցուցանիշներ): Առաջին և երկրորդ եռամսյակներում գրանցված ծախսերի դրական ազդակներն արդյունք էին հիմնականում ծախսերի համապա-

տասխանաբար 2.8 %-ով և 4.2 %-ով աճի, թեև այս կիսամյակում կատարվեց ծրագրով նախատեսված կիսամյակային ծախսերի 83.2 %-ը: Երրորդ եռամսյակում պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 35.5 %-ով և կազմել ՀՆԱ 32.9 %-ը՝ նախորդ տարվա 23.8 %-ի դիմաց, որը պայմանավորված էր նաև նշված եռամսյակում Կառուցվածքային բարեփոխումների վարկի միջոցներից ծախսերի մի մասի ֆինանսավորմամբ: Արդյունքում, չորրորդ եռամսյակին բաժին ընկավ տարեկան ծախսերի 31.4 %-ի կատարումը: Ինչ վերաբերում է ծախսերի նման մակարդակի պայմաններում բացասական ազդակի ցուցանիշին, ապա դա հիմնականում արդյունք է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված խոշոր ծախսերի:

### *Հարկաբյուջետային քաղաքականություն*

1997-99 թթ. ժամանակահատվածում պետության ծախսային և եկամտային քաղաքականությունները դիտարկելուց հետո ընդհանուր գծերով ներկայացնենք հարկաբյուջետային քաղաքականությունը: Նշված ժամանակահատվածում պետության հարկաբյուջետային քաղաքականությանը հատկանշական է եղել հիմնականում կոշտ բնույթը, ինչը մասնավորապես իր ազդեցությունը թողեց նաև 1998 և 1999 թվականների սղաճի ծրագրային մակարդակների ապահովման վրա: Ըստ ազդակների դրսևորած ցուցանիշների՝ նշված քաղաքականությունն ընդլայնող է եղել 1997 թ. առաջին, 1998 թ. չորրորդ, ինչպես նաև 1999 թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում: 1998 թ. չորրորդ և 1999 թ. երրորդ եռամսյակներում դիտվում են նախորդ եռամսյակներում ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարում, և դրա հետևանքով ծրագրային ցուցանիշների ապահովման լարվածության տեղափոխում այս եռամսյակներ, ընդ որում, 1998 թ. չորրորդ եռամսյակի հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող բնույթն արդյունք է նաև եկամտների ընդլայնող քաղաքականության (նշված եռամսյակի ծրագրավորված 66 մլրդ դրամ եկամտի դիմաց փաստացի ունեցել ենք 59 մլրդ դրամ եկամտ), այսինքն՝ ծախսերի ֆինանսավորման մեջ մեծ կշիռ են ունեցել արտաքին աղբյուրներից ստացված միջոցները (մասնավորապես Կառուցվածքային բարեփոխումների վարկը): Մնացած դիտարկվող ժամանակահատվածներում հարկաբյուջետային քաղաքականությունը զսպողական էր, մասնավորապես եկամտային քաղաքականության զսպողական բնույթի պատճառով, ինչն առավել մեծ է եղել 1998 թ. առաջին եռամսյակում: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրվող երեք տարիների ընթացքում առկա է քաղաքականության միևնույն սցենարը, այն է՝ առաջին կիսամյակում ծրագրի թերակատարում, և տարեկան ծրագրի կատարման լարվածության տեղափոխում երկրորդ կիսամյակ, ինչը, բնականաբար, լարվածություն է ստեղծում նաև դրամավարկային ցուցանիշների, հետևաբար նաև սղաճի ծրագրային ցուցանիշի ձևավորման բնագավառում:

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. "How to measure fiscal deficit" 1992 IMF, Washington D.C.
2. Mario Monti "Fiscal policy economic adjustment, and financial markets"
3. World Bank working paper "Fiscal Impulse measure" H.Balash